

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԶԱՅՆԸ

Կոմունիստական պարտիան սովետական հասարակության կազմակերպող և ոգեշնչող ուժն է: Նրա իմաստուն ղեկավարութեամբ սովետական ժողովուրդը հասել է համաշխարհային-պատմական հաղթանակների: Կենսագործելով ՍՄԿՊ 19-րդ համագումարի որոշումները, պարտիան ապահովեց ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության և կուլտուրայի նոր, հզոր վերելքը:

Մեր Հայրենիքի ուժն ու անպարտելիությունը պարտիայի, կառավարության և ժողովրդի սերտ միասնականության մեջ է, ՍՍՌՄ ժողովուրդների անխորտակելի բարեկամության և եզրայրական համագործակցության մեջ: Սովետական ժողովրդի անխորտակելի բարեկամությունը մեր բազմազգ սոցիալիստական պետության հիմքերի հիմքն է, եզրայրական իրավահավասար ռեսպուբլիկաների բոլոր հաջողությունների գլխավոր պայմանը: Ներքին և արտաքին թշնամիների ոչ մի ստոր փորձ չի կարող խախտել պարտիայի, կառավարության և ժողովրդի միասնությունը, սասանել անխախտ դաշինքով հավիտյան զոդված աղատ ու հրջանիկ ռեսպուբլիկաների Միությունը, խանդարել ղեկավար կոմունիզմ մեր երկրի հաղթական առաջընթացը:

Սովետական Միության հզոր ընտանիքում, Կոմունիստական պարտիայի և հարազատ կառավարության ջերմ հոգատարությունը շնորհիվ ժողովում ու բարձրակարգ է սովորական Հայաստանը: Ռեսպուբլիկայի աշխատավորները, ոգեշնչված պարտիայի 19-րդ համագումարի որոշումներով, հաջողությամբ իրականացնում են հինգերորդ հնգամյա պլանը, անձնվեր աշխատանքով ամրապնդում մեր Հայրենիքի հզորությունը:

Հայ ժողովուրդը ջերմորեն և խոր գոհունակությամբ ընդունեց ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Պլենումի որոշումը պարտիայի և ժողովրդի դիւնրիմ թշնամի Բերիայի պարտիայից փտարելու և ՍՍՌՄ Գերագույն Սովետի նախագահության որոշումը՝ միջազգային իմպերիալիզմի այդ վարձկանին դատի տալու մասին:

Ռեսպուբլիկայի աշխատավորները խոր ցասումով նշավակում են պարտիայի ու ժողովրդի երզվայ թշնամի Բերիայի հանցավոր գործողությունները, նրանք անհուն շնորհակալություն են հայտնում պարտիայի Կենտրոնական Կոմիտեի մասնակցին և վճռական միջոցառումներով Բերիայի հակապարտիական և հակապետական հանցավոր գործողությունները չիկվիդացնելու, մեր Հայրենիքին սպառնացող վտանգը կանխելու համար:

Երեկ, հուլիսի 14-ին, Հայկական ՍՍԻ Գերագույն Սովետի նիստերի ղահիճում բացվեց Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնական և Նրևանի կոմիտեի միացյալ պլենումը ռեսպուբլիկայի պարտիական ակտիվի հետ համատեղ՝ նվիրված Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի Պլենումի արգյունքների ընտրականը: Արտահայտելով ամբողջ հայ ժողովրդի կամքը, պլենումի մասնակիցները միահամուտ կերպով հավանություն են տալիս ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի Պլենումի որոշմանը՝ ժողովրդի ստոր թըշնամի, բուրժուական վերատեսրված, միջազգային իմպերիալիզմի գործակալ Բերիայի հակապարտիական և հակապետական հանցավոր գործողությունների մասին:

Ելույթ ունեցող ընկերները բացահայտում են ռեսպուբլիկայի պարտիական կազմակերպությունների աշխատանքում տեղ գտած թերությունները, կոնկրետ առաջարկություններ անում ՍՄԿՊ Կենտրոնական Կոմիտեի առաջադրած խնդիրները հաջողությամբ կատարելու համար: Պլենումի ուշադրության կենտրոնում են պարտիական և տնտեսական ղեկավարության ձևերն ու մեթոդները կատարելագործելու, պարտիայի Կանոնադրության պահանջները խստիվ պահպանելու, մասունների հետ ունեցած կապին ամրապնդելու, կոմունիստների և անպարտիականների ձևայնությունը զգանու-

թյունը բարձրացնելու, մարքսիզմ-լենինիզմի պրոպագանդայի զրվածքը բարելավելու, ժողովուրդների բարեկամությունն ամրապնդելու, ինքնաբնադատությունը և ներքինը եկող ընտանադատությունը ծավալելու հարցերը: Պարտիայի Կիրովյան ուսուցիչ բարտուղար ընկ. Լ. Բարսյանը իր ելույթում ասաց.

— Սովետական ժողովուրդը սիրում է Կոմունիստական պարտիային, նրա լենինյան-ստալինյան Կենտրոնական Կոմիտեին և հարազատ Սովետական կառավարությանը: Այժմ, քան երբեք, մեր ժողովուրդը է՛լ ակտիվ սերտորեն է համախմբվում պարտիայի և կառավարության շուրջը: Կենտկոմի Պլենումի որոշումը պարտավորեցնում է անհրաժեշտ դասեր արնել դավաճան Բերիայի գործից, բարձրացնել պարտիական-բաղաբական, պարտիական-կազմակերպական աշխատանքի մակարդակը:

Միջազգային իմպերիալիզմի գործակալ Բերիայի հանցավոր գործողությունները և ուխտագրում դիտավորությունները նպատակ ունեն բայցայել Սովետական պետությունը հողուտ կապիտալի շահերի: Ստոր պրոպագանդա և պարտիայի թշնամի Բերիան, ճարտկորեն քաղաքակրթով, դանազան մերենայություններով վատահոություն էր կորչել և խցկվել ղեկավարության մեջ: Զգտելով իրագործել իշխանությունը զայլիելու իր հանցավոր մեքենայությունները, այդ մղչի կարյերիստը և ավանտյուրիստը կազմերն ընտրում էր իրեն անձնապես նվիրվածության սկզբբունքով: Նա ձգտում էր զանազան խարդախ եղանակներով խարխել ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը: Պարտիայի ազգային քաղաքականության խախտումների դեմ պայքարելու կեղծ պատրվակով նա փորձում էր երկպառակություն և թշնամանք սերմանել ՍՍՌՄ ժողովուրդների միջև, ակտիվացնել բուրժուա-նացիոնալիստական տարբերին միոթենական ռեսպուբլիկաներում: Իր դավաճանական գործունեությամբ իմպերիալիզմի ստոր գործակալ Բերիան թիշ վնաս չի հասցրել նաև Անգրկովկասի երբայրական ղեսպուբլիկաներին, ձգտելով նացիոնալիզմ սերմանել ռուս, վրացի, ադրբեջանցի, հայ և այլ ժողովուրդների միջև:

— Թշնամու հույսերը ջախջախված են, անասան է սովետական հասարակարգը, անխորտակ է ՍՍՌՄ ժողովուրդների բարեկամությունը, — յոլիկտիվի ժողովում ունեցած իր ելույթում ասաց կեննականի Մոլոտովի մանող քանկորուհի Գ. Հունարյանը, — թող իմպերիալիզմի սպասարկները իմանան, որ սովետական ժողովուրդը միշտ իր հարազատ պարտիայի հետ է, սերտորեն համախմբված է նրա շուրջը: Ռեսպուբլիկայի քաղաքներում և գյուղերում տեղի ունեցող ժողովներում աշխատավորները պարտավորում են լայնորեն ծավալել սոցիալիստական մրցութունը, լրիվ լրափով օգտագործել ձեզերվներն ու հնարավորությունները հինգերորդ հնգամյա պլանը ժամանակին կատարելու և գերակատարելու համար:

Կուլտնտեսային գյուղի աշխատավորության խոհերը լավ է արտահայտել Արթիկի շրջանի նոր Կյանք գյուղի կուլտնտեսական Ս. Գասպարյանը:

— Մենք, կուլտնտեսային գյուղի աշխատավորներս, մեր ուրախ և երջանիկ կյանքի համար պարտական ենք հարազատ պարտիային և կառավարությանը, — ասում է նա — իմպերիալիզմի վիճվածքները թն կարող խարխել մեր երջանկության ազդար կուլտնտեսային կարգը:

Միահամուտ կերպով հավանություն տալով ՍՄԿՊ Կենտկոմի Պլենումի որոշմանը, հայ ժողովուրդը է՛լ ակտիվ սերտորեն է համախմբվում պարտիայի և կառավարության շուրջը, իր պատրաստակամությունը հայտնում Սովետական Միության հզոր ընտանիքում, ռուս մեծ ժողովրդի գլխավորությունը այսուհետև ևս աշխատելու բազմապատկրված ետանգով՝ հանուն մեր երկրում կոմունիզմի չիակատար հաղթանակի:

Աշխարհում չկա ոչ մի ուժ, որ կարողանա կանգնեցնել սովետական հասարակության հաղթական առաջընթացը: